№ 190 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23

1907

ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 № 190

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գերասիմ Գալստեան և Նատալիա Պօղոսեան Եակուլեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և բարեկամներին, որ իրանց անմոռանալի դուստր

ԼԻՒՍԻԻ

Թաղումը տեղի է ունենալու այսօր, դեկտեմբերի 23-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, պատարագից յետոյ, որ կը կատարվի Խօջիվանքի եկեղեցում:

Թիֆլիսի Երկրորդ Փոխադարձ Վարկի Ընկերութեան Անդամների ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նշանակված է կիրակի, դեկտեմբերի 23-ին, առաւօտ. ժամը 10-ին, քաղաքային վարկի ընկերութեան դահլիճում (Պուշկինսկի փող. Թամամշեվի քարվանսարայի դիմաց):

Պարապմունքների առարկաներն են

1) Նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը. 2) ընտրել անդամների և ընդունող մասնաժողովի անդամների վարձատրութեան չափը և միջոցը. 3) վարչութեան երեք անդամի, խորհրդի վեց պատգամաւորների, վերստուգիչ մասնաժողովի երեք անդամի և վերջիններիս երեք թեկնածուների ընտրութիւնները: Խնդրվում է մտնելու ժամանակ ներկայացնել անդամութեան կվիտանցիաները:

Ծանօթ.—Կանոնադրութիւնը և անդամների ցուցակը կարելի է ստանալ նոտար Նիկոլայեվի գրասենեակում:

2—2

(առ.)

ԵՂԲ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Խ. և Մ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

յայտարարում է ի գիտութ. յարգելի վաճառականների, որ նրա Մոսկվայի խանութում վաճառվում են մեծ քանակութեամբ

ԳԱԼԱՆՏԵՐԷԵՆԻ

զանազան ապրանքներ: Գները շատ մատչելի են: Պատուէրները կատարվում են անյապաղ և ամենայն ճշտութեամբ:

Հասցէն՝ МОСКВА, Никольская улица, домъ графа Шереметьева, Торг. домъ

„Бр. Х. и М. Меликъ-Марутянцъ"

Թիֆլիսում

Մոսկվայում

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

15—14

(հ. կ.) առ.

Հինգշաբթի, դեկտեմբերի 27-ին,
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Յօգուտ
ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳ. ԴՊՐՈՑԻ
չքաւոր աշակերտների

Տեղի կունենայ

I. Համերգ

II. Պարահանդէս

Համերգը բարեհաճ մասնակցութեամբ տ. տ. Եավօրսկայի և Սավիցկայի, պ. պ. Արմէնեանի, Բարեատինսկու, Բիլդշտէյնի, Մատկօվսկու, Եղիաշովի և Քափանակեանի.

Երգեցիկ խումբը՝ պ. Միրզայեանի.

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ղեկավարութեամբ պ. Ինօչէնցիի

Դահլիճը շքեղ զարդարված կը լինի տրօպիք և այլ բոյսերով, transparent-moderne կիօսկներով, արձանով—«Fiatlux».

Կիօսկները նկարիչ պ. Շամշինեանի էսկիզներով.

Բոյսերը, ծաղիկները և պավիլիօնը «Շիվիէր»-ից.

ՎԻՃԱԿԱԽԱՂ

(Տոմսը 20 կոպ.)

Գեղարուեստակ. և թանգագին իրեր, Պօստ, էլեքտրակ. լոյսի էֆֆեկտներ.

Օրկէստր պ. ԳԻԶԻՆԻԻ ղեկավարութեամբ

ՍԱԶԱՆԴԱՐ

Մուտքը 2 ր. 20 կոպ. (ուսուցիչ. 1 րուբ., ուսանող. 50 կոպ.)

Սկիզբը 8½ ժամին երեկոյեան.

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Արտիստական ընկ. թատրօնի կասսայում և եղբ. Սուգմէնաչեանների խանութում (Երևանեան հրապ.)

առ. 1—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

կիրակի, դեկտեմբերի 23-ին,

Հայ դերասանների ընկերակցութիւնը

Յօգուտ գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան

կը ներկայացնէ

→ ԺԱՅՌ ←

Դրամա 4 գործ. Վ. Փափազեանի

Մասնակցում է ամբողջ խումբը

Տեղերի գինը 3 ր. 60 կ.-ից 1 ր.

Տոմսակ վերցնողները ժողովարանի մուտքի համար առանձին չեն վճարում

Տոմսակները կարելի է ստանալ ժողովարանում, շվէյցարից.

Սկիզբը ժամը 8-ին.

2. կ. 2—2

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(Վիրօչնայա փողոց)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

կիրակի, դեկտեմբերի 23-ին,

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ռուսերէն լեզուով կը կարդայ դասախօսութիւն

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Դասախօսութեան սկիզբն է առաւ. 11½ ժ.

Տոմսակները 10 և 5 կոպ. կը ծախվին առաւօտեան 10 ժամից:

2. կ. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի, որ ի նկատի առնելով, որ ներկայ տարվայ դեկտեմբերի 25-ին և 1908 թ. յունվարի 1-ին ժողովարանը կանոնադրութեան համաձայն փակվելու է, այդ պատճառով այդ օրերի փոխարէն ընտանեկան երեկոյթները կը կայանան ներկայ դեկտեմբերի 26-ին և 1908 թ. յունվարի 2-ին:

Կ. Ե. 1—2

Гановская ул. № 7.

◇ПОРТРЕТНОЕ АТЕЛЬЕ◇

ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Ընդունվում են

Գեղարուեստական մեծադիր պօրտրետների պատուէրներ ամեն տեսակ լուսանկարած պատկերներից, մինչև ցանկացած չափը. գործը կատարվում է արագ և ճաշակով:

Գները 3 րուբլուց սկսած

Պատուէրները դրվում են պասպարտուների մէջ և ըստ ցանկութեան՝ շրջանակներով:

(կ.ե.հ.) առ 6—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յիշեցէք նրանց. Վերջին տեղեկութիւններ. Մառի ուսումնասիրութիւնների առթիվ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մտքեր և փաստեր. Առաջին Դումայի դատարանի առաջ. Բնական աղէտներ. Ժողովրդական համալսարանի վարչական նիստում. Դատաստանական Դահլիճից. Թիֆլիսի ոստիկանապէտի կարգադրութիւնը. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ռուսաստանի կեանքից. Նամակներ խմբագրութեան. Պ. Յովհաննէս Աբէլեան. Ֆելիէտօն. Մամուլ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակներ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՅԻՇԵՑԷՔ ՆՐԱՆՑ

Այն մարդիկ, որոնք առիթ են ունեցել յաճախելու մեր խմբագրատունը, լաւ գիտեն, որ ամեն օր մեր խմբագրական աշխատողների ժամանակի մի մասը նուիրված է լինում զանազան խնդրողների և աղքատների:

Սովորութիւն է դարձել կարօտեալներին ուղարկել «Մշակի» խմբագրատուն: Ում որ քաղաքում դիմում է աղքատը, նրան ցոյց են տալիս ճանապարհը դէպի մեր խմբագրատուն:

Եթէ կարող ենք մի որևէ օգնութիւն անել՝ անում ենք. բայց անտարակոյս, ինչ կարող ենք անել մենք կարօտեալների այն մեծ թւի համար, որ մեզ դիմում են:

Անշուշտ, շատ քիչ բան:

Եթէ այն բոլոր անձերը, որոնք աղքատին առաջնորդում են դէպի մեր խմբագրատուն, ուղարկէին և մի որևէ նպաստ աղքատներին տալու համար, անկասկած, մենք կը հասկանայինք նրանց բարի առաջնորդութեան ներքին տրամաբանութիւնը:

Բայց դժբաղդաբար քիչերն են իրանց խորհուրդները զուգորդում որևէ օժանդակութեամբ իրանց կողմից, և աղքատին ուղարկելով դէպի մեր խմբագրատուն, ցանկանում են իրանց գլուխը ազատել դիմողներից:

Ուղարկելով թշուառին խմբագրատուն, մարդիկ հաշուի չեն առնում թէ որքան դժուար է մեզ համար մերժել դիմողին, որը եկել է յոյսով և սպասելիքներով:

— Եթէ դուք էլ չօգնէք,—ասում է կարօտեալը,—այլ ես ում դիմենք: Դուք հասկանում էք թշուառի ցաւը, դուք գրում էք նրանց մասին. ողորմեցէք կարօտեալներիս:

Ծանր է լինում մեզ համար լսել այդ բոլորը: Տալիս ենք, ինչ որ կարող ենք լինում: Երբեմն խմբագրական հիւրերը օգնութեան են գալիս մեզ ինքնաբերաբար:

Շատ անգամ ստիպված ենք լինում առաջարկել թշուառ դիմողներին սպասել մինչև տօները և գալ մեզ մօտ Նոր-Տարվայ օրը կամ Ջրօրհնէքի և Զատկի նախօրեակին: Այդ օրերի համար խմբագրատանը հաւաքված է լինում մի որևէ գումար, երբեմն բաւարար, երբեմն շատ քիչ:

Տօն օրերին ստացած օժանդակութիւնը հաշտեցնում է մի կերպ աղքատին իր թշուառ և յուսահատ կացութեան հետ: Իսկ եթէ այդ օրերն էլ նա քաղցած է, նրա համար սևանում են ոչ միայն տօները, այլ ամբողջ նրա կեանքը:

Յիշեցէք այդ խեղճերին և հոգ տարէք նրանց մասին: Երբ նրանց հեշտութեամբ ուղարկում էք դէպի մեր խմբագրատուն, հնարաւորութիւն տուէք, որ մենք էլ կարող լինենք օգնել այդ դիմողներին:

Իւրաքանչիւր տարի տօներին՝ հարիւրաւոր մարդիկ խմբվում են խմբագրատան շուրջը և նպաստ են խնդրում: Որքան էլ փոքր լինի այդ նպաստը, մարդիկ նրան էլ տալիս են նշանակութիւն, որովհետև ուրիշ ելք չունեն:

Յիշեցէք կարօտեալներին:

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտեմբերի լոյս 22-ի գիշերը Բագուի երկաթուղագծի Կարայազ կայարանի մօտ տեղի է ունեցել ծառայողների գնացքի խորտակում: Կան սպանվածներ և վիրաւորվածներ: Մանրամասնութիւնները Թիֆլիսում դեռ չեն ստացվել:

—

Բագու, 20 դեկտ.—Առաւօտեան գործադուլ արին Բագուի նաւթային ընկերութեան բոլոր նաւթահանքերը:

—

Երևանի նահանգապետը կովկասեան գլխաւոր իշխանութեան առաջ միջնորդութիւն է յարուցել, որ գանձարանից 9328 րուբլի նպաստ տրվի Նոր-Բայազէտի գաւառի Չիբուխլու, Կօրուխ-Գինէյ, Ուլաշիկ և Առաջին Կարակալա գիւղերի սերմացուի պէտքերը հոգալու համար: Յիշեալ գիւղերը վնասվել են անբերրիութիւնից, հեղեղներից և վաղաժամ ցրտերից: («К.»)

—

Երևանի նահանգապետը միջնորդութիւն էր յարուցել, որ Երևան քաղաքում սպասվող ալիւրի սուր պակասութեան առաջն առնելու համար փոխադարձաբար 30,000 պուդ ցորեն տրվի տեղական մատակարարական խանութից Երևանի զումայական մըշտական մատակարարական մասնաժողովին: Այժմ «Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարը հնարաւոր չէ գըտել բաւարարութիւն տալ յիշեալ միջնորդութեան, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ յիշեալ խանութի ալիւրը բաւարար չէ գոհացում տալու զօրաբանակի հերթական պահանջներին:

—

Ուրմիա.—Բանակցութիւններ են տեղի ունենում, թէ սահմանաչափ թիւրք-պարսկական մասնաժողովը որտեղ է նիստեր գումարելու: Պարսիկները առաջարկում են Ուրմիան:

—

Թէհրան, 16 դեկտ.—Մէջլիս եկան բոլոր մինիստրները՝ պատասխան տալու վերջին օրերի անկարգութիւնների մեղաւորներին պատժելու հարցադրման: Զինուորական մինիստր և Թէհրանի նահանգապետ պրինց Զաֆար-Սալթանէն խոստացաւ շուտով պատժել մեղաւորներին: Թաղի-Զալէն ներքին գործերի մինիստրից պահանջեց՝ Վերամինից հեռացնել Իկբալ-ուդ-Դօվլէին, որ զինված պաշտպանողական խմբեր է ուղարկում բէակցիօնէրներին:

Մէջլիսի բակը և սանդուղքը պաշտպանում են սարբազները: Պարլամենտի մէջ զինված կամաւոր խմբերը գեներալի ղեկավարութեամբ գրաւում են դահլիճի մի մասը և նախասենեակները:

—

Թաւրիզ.—Եկաւ հիւպատոսարանի լրացուցիչ կօզակների խումբը, որ և հանդստացրեց յուզված ռուսահպատակներին և քրիստոնեաներին:

—

Կ. Պօլիս.—Պետական խորհրդի անդամ Կոմասիս-էֆէնդին նշանակված է Սամօսի իշխան:

ՄԱՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Պրոֆէսոր Մառը Բագւում է:

Նա եկել է մի քանի դասախօսութիւններ կարդալու:

Հաւանական է, որ նա անցնէ և Թիֆլիս և այստեղ էլ կարդայ մի երկու դասախօսութիւն:

Բայց մենք կը ցանկայինք, որ Մառի այս անգամվայ գալուստով դըլական լուծում ստանար մի հարց, որի մասին մենք մի քանի անգամ խօսել ենք մեր հասարակութեան հետ:

Դա Անիի և մեր միւս հնութիւնների ուսումնասիրութեան հարցն է:

Մառը վերջին տարիները ամենալուրջ կերպով զբաղված է այդ ուսումնասիրութիւններով և առաջ է տանում նրանց որոշ սիստեմով և ծրագրով:

Ուսումնասիրութիւնները հանդէս են բերել մի շարք նիւթեր, որոնք առանձին լոյս են սփռում հայկական պատմութեան, ճարտարապետութեան, գեղարուեստի և կենցաղագրութեան վըրա:

Ուսումնասիրութիւնների պատասխանատու գործը գտնվում է հեղինակաւոր ձեռքերում և նրա ամեն մի նոր տարին բերում է մեզ նոր գիտնական լուսաբանութիւններ մեր կուլտուրական անցեալի վերաբերմամբ և թոյլ է տալիս որոշ եզրակացութիւններ անել կուլտուրական երևոյթների աւելի ընդարձակ շրջանի համար, քան բուն հնութիւնների նիւթեղէնն է թելադրում:

Պէտք է գնահատել այն հանգամանքը, որ մի լուրջ և բարեխիղճ հետազօտող աշխատում է մեր երկրում և աշխատում է՝ սիրելով գործը և մօտ առնելով իր սրտին այն ամենը, ինչ որ ընդարձակում է մեր գիտութիւնը մեր երկրի մասին:

Մի ուրիշ ժամանակ, մենք շատ էլ կը ցանկանք, որ գտնենք այդպիսի հետազօտողներ և ուսումնասիրողներ, բայց չենք գտնի: Եւ միթէ մեր կեանքի միւս ասպարէզներում մենք չենք զգում լուրջ գործողների անհրաժեշտութիւնը, բայց չենք գտնում նրանց:

Եթէ բագուեցիներին կաջողվի այս անգամ Անիի հետազօտութիւնների գործը ապահովել նիւթական օժանդակութեամբ, դա կը լինի մի գեղեցիկ աջակցութիւն այն գիտնական ձեռնարկութեան, որը Մառի նախաձեռնութեամբ առաջ է տարվում այնքան մեծ աջողութեամբ:

Ա. Քալանթար

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

Լաւ չեմ յիշում ով է ասել, բայց մի ճշմարիտ ասացուած կայ, թէ ամեն բան, որ ստեղծվում է, լաւ է, բայց փչանում է մարդի ձեռքում: Յաճախ ամենալաւ, ամենավեհ գաղափարները ստանում են իրանց գործադրութեան ընթացքում ամենահրէշաւոր բնաւորութիւն:

Յաճախ՝ մերկանալով, շահասէր ոգին մտնելով մաքուր, գաղափարական մի ձեռնարկութեան մէջ՝ ակնկալված մեծ բարիքի փոխարէն մեծ չարիք է արտադրում: Եւ այդ ժամանակ մասսան, որ անընդունակ է և անձեռնհաս քննադատական վերաբերմունք ունենալ դէպի որևէ մի գործ, մի երևոյթ, դատելով լոկ հետևանքից, միանգամայն դատապարտում է վեհեցիկի իդէալական գործը:

Այդպիսի մի երևոյթի և ձեռնարկութեան առաջ կանգնած ենք այժմ:

Վերջին ժամանակներս մեր մէջ սկսվեցին

կազմակերպվել պրօֆէսիօնալ միութիւններ: Ինքն ըստ ինքեան պրօֆէսիօնալ միութիւնը մի օգտակար կազմակերպութիւն է. որոշ պրօֆէսիայի, արուեստի, արհեստի մարդիկ կազմակերպվում են իրանց շահերը, իրաւունքները պաշտպանելու և իրանց մտաւոր, բարոյական, նիւթական բարգաւաճման մասին մտածելու, հոգս տանելու նպատակով: Բայց այդպիսի ամեն մի կազմակերպութիւն միշտ ի նկատի ունի մի այլ կազմակերպութիւն կամ պայմաններ, որոնք կարող են շահագործել իրան: Եւ ահա չը շահագործվելու համար, հեռացնելու համար այն պայմանները, որոնք ստեղծում են շահագործութիւն, կազմվում է որոշ պրօֆէսիօնալ միութիւն. այսպէս, օրինակ, բանւորները կազմում են պրօֆէսիօնալ միութիւն՝ կապիտալիստների դէմ, որոնք շահագործում են բանւորի աշխատութիւնը. գործակատարները կազմում են պրօֆէսիօնալ միութիւն՝ իրանց տէրերի, խօզեինների շահագործութիւնից ազատվելու համար և այլն: Այստեղ հասկանալի է պրօֆէսիօնալ միութիւնը. կայ շահագործվող կողմ, կայ շահագործող կողմ: Երկու կողմերն էլ կարող են կազմել պրօֆէսիօնալ միութիւններ, իրար փոխադարձ շահագործութիւնից խուսափելու համար:

Սակայն պրօֆէսիօնալ միութիւնները չը պէտք է հրէշաւոր բնաւորութիւն ստանան. նրանք չը պէտք է ուղղված լինեն առ այն, կամ չը պէտք է պարունակեն այնպիսի տարրեր իրանց կազմակերպութեան մէջ, որոնք արգելք լինեն կուլտուրայի, լուսաւորական և կրթական հաստատութիւնների զարգացման կամ սպանեն, մահացնեն բարի և օգտակար հաստատութիւնները: Եթէ բանւորական պրօֆէսիօնալ միութիւնները իրանց նպատակ դնեն ոչ թէ բարուոքել իրանց վիճակը կամ արմատականապէս վերակազմել իրանց սօցիալական դրութիւնը, այլ ոչնչացնել արդիւնաբերութիւնը, դրանով, ի հարկէ, նրանք կը սպանեն և՛ արդիւնաբերութիւնը, և՛ իրանց: Այլ բան է, երբ բանւորները աշխատում են մտքերի, բարքերի, հասկացողութիւնների և սօցիալական կազմի մէջ այնպիսի փոփոխութիւններ առաջ բերել, այնպիսի պայմաններ ստեղծել, որ անհնարին դառնայ կապիտալի շահագործութիւնը ի հաշիւ աշխատաւորի, և այլ բան է ձգտել՝ միանգամից ոչնչացնել, սպանել կապիտալի օգնութեամբ ստեղծված ձեռնարկութիւնները:

Դժբաղդաբար, մեր հայերիս մէջ, շնորհիւ մեր անկուլտուրականութեան, շնորհիւ մեր գործողների խակութեան, վայրիվերոյ կըրթութեան և եւրօպական գաղափարների անմարսողութեան, պրօֆէսիօնալ միութեան գաղափարն էլ, ինչպէս և ամեն մի օգտակար գործ, հրէշաւոր կերպարանք ստացաւ: Իրանց նեղ, անմիտ և վնասակար գործելակերպով յայտնի գործողներ մտածեցին կազմակերպել տալ իրանց հովանու ներքոյ պրօֆէսիօնալ միութիւններ ոչ թէ պրօֆէսիօնալ աշխատաւորների շահերը և իրաւունքները պաշտպանելու նպատակով, այլ իրանց սեփական, թայֆայական շահերի նկատումով, ուրիշ յետին մտքով: Եւ այդ յետին միտքը առաջացրեց անհամար վնասներից բացի նաև ծիծաղաշարժ և զաւեշտական երևոյթներ: Ինձ կը հարցնեն՝ ինչ վատ բան կայ, երբ քիսաչիները և թօքմաչիները (ձեռքով արծաթէ զարդեր շինողներ, ձուլողներ) պրօֆէսիօնալ միութիւն կազմեն: Ոչ մի վատ բան չը կայ,—կը պատասխանեմ ես.— բայց պէտք է իմանալ՝ որտեղ և ինչ նպատակով կազմել: Գօրիս աւանում ընդամենը եղել են երկու թօքմաչի. մինը՝ վարպետ, միւսը՝ նրա աշակերտը: Դաշնակցութեան ազէտ զինւորները, հրահանգ ստացած լինելով իրանց թէրուս չէֆերից՝ պրօֆէսիօնալ միութիւն կազմել, յորդորում են երկու խեղճ թօքմաչիներին կազմակերպվել, հաւատացնելով, ի հարկէ, որ դրանով նրանց նիւթական վիճակը անհունապէս կը բարուոքվի: Խեղճերը հաւատում են և յայտարարում, որ Գօրիսի թօքմաչիները պրօֆէսիօնալ միութիւն են կազմել: Բայց ում դէմ. ի հարկէ իրանց դէմ, որովհետև նրանք շատ շուտով նկատեցին, որ բարձրացնելով գները աւելի քան ուրիշ տեղերում կան, նրանք հեռացնում են իրանցից գնողներին, հետևաբար կարող են սովից մեռնել...

Նոյնպէս է քիսաչիների պրօֆէսիօնալ միութիւնը: Քիսաչիները, ինչպէս յայտնի է, ռոճիկ չեն ստանում բաղնիսատէրերից կամ իջարադարներից, այլ ստանում են վարձ լողացողներից: Ունևոր լողացողները, սովորաբար, տալիս են այն, ինչ որ պահանջում են քիսաչիները կամ որոշված է քաղաքային վարչութեան կողմից, յաճախ՝ նոյնիսկ աւելի. ուրեմն քիսաչիները պէտք է կազմակերպվեն խեղճ, չքաւոր դասակարգին պատկանող լողացողների դէմ, պահանջելով նրանցից այն, ինչ որ նրանք չեն կարող տալ: Դրա հետևանքը այն կը լինի, որ առանց այն էլ կեղտոտութեան մէջ շաղախված մեր հասարակ ժողովուրդը կը դադարէ բաղնիք գնալուց:

Եւ այդ ամենը առաջ է գալիս նրանից, որ կազմակերպողները կամ «հովանաւորները» նպատակ են ունեցել ոչ թէ քիսաչիների, թօքմաչիների և միւս աշխատաւորների շահերը, այլ իրանց թայֆայական շահերը, որպէսզի յետոյ բրօշիւրներ տպեն և մոլորեցնեն նոյնիսկ եւրօպական հասարակութիւնը, թէ իրանց հովանու ներքոյ այսքան հազարաւոր աշխատաւորներ կան...

Բայց քիսաչիների և Գօրիսի թօքմաչիների պրօֆէսիօնալ միութիւնը, զաւեշտական լինելուց կամ իրանց վնաս տալուց բացի, ուրիշ վնասակար հետևանք չէ կարող ունենալ:

Աւելի ծանր, աւելի վնասակար է իր աղէտաբեր հետևանքներով մի այլ պրօֆէսիօնալ միութիւն, որ նոյնպէս որոշ խմբակի ազդեցութեան և հովանու ներքոյ ծնվեց. մի միութիւն, որ գիտութեամբ թէ անգիտութեամբ, բայց էապէս ուղղված է հայ ժողովրդի դէմ, հայոց ժողովրդական դպրոցների դէմ: Դա—ուսուցիչների պրօֆէսիօնալ միութիւնն է, որ այժմ օտարոտի բնաւորութիւն է ստացել և որ սպառնում է ոչ միայն խափանել նոր դպրոցների բացումը, այլև փակել տալ եղածները:

Թէ ինչպէս, մենք այդ կը բացատրենք և կապացուցանենք յաջորդ անգամ.

Շահրիար

ԱՌԱՋԻՆ ԴՈՒՄԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Դեկտեմբերի 14-ի նիստը

Դատարանի դահլիճում նախորդ երկու օրվայ նման խումբ-խումբ կանգնած՝ նախկին պատգամաւորները աշխուժով զրուցում են երդուեալ-պաշտպանների հետ: Ուղիղ ժամը 11 և 20 րօպէին ներս են մտնում դատաւորները, և լսվում է նախագահի սովորական խօսքերը. «դատաստանական նիստը վերսկսվում է»:

Առաջինը ցանկութիւն է յայտնում բացատրութիւն տալ սօց.-դեմօկրատական ֆրակցիային պատկանող նախկին պատգամաւոր Իսերսկին, իսկ յետոյ արդէն խօսքը վերապահվում է պատգամաւոր Ռամիշվիլուն: Երկու ճառախօսներն էլ մտնում են հարցին սօց.-դեմօկրատական բնորոշ տեսակէտով և բացատրում են՝ իրանց վերաբերմունքը Վիբորգի կոչի նկատմամբ: Մի փոքրիկ գաղափար տալու համար սօց.-դեմօկրատական ֆրակցիայի ճառախօսների մասին՝ մենք կը տանք Ռամիշվիլու ճառը:

Մեղադրեալ Ռամիշվիլուն անհասկանալի է թւում, որ այժմ դատում են առաջին Պետական Դուման, երկրի «լաւագոյն մարդկանցը», որոնք կոչված էին օրէնսդրական աշխատանքներ կատարելու, վերանորոգելու երկիրը հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հիման վրա:

—Ի՞նչ պատահեց,—հարցնում է Ռամիշվիլին:—Ջը դաւաճանեցի՞ն, արդեօք, պատգամաւորները իրանց պարտականութիւններին, չը լինի՞ թէ նրանք փոխանակ երկիրը վերանորոգելու պահպանել են նրան հին օրէնքների մէջ, որոնք այլևս չէին համապատասխանում ժողովրդի ցանկութիւններին. մի գուցէ նրանք ուզում էին ոչնչացնել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը և պատմութեան անիւը դարձնել դէպի յետ: Ոչ: Այդ ծանր յանցանքները առաջին Պետական Դումայի պատգամաւորները, բարեբաղդաբար, չեն գործել: Նրանք մեղադրվում են Վիբորգեան կոչը ստորագրելու համար. նրանք մեղադրվում են քրէական օրէնքների 129-րդ յօդուածի հիման վրա. ահա թէ ինչու նրանք այստեղ են:

«Սակայն ի՞նչպէս պատահեց, որ երկրի այդ «լաւագոյն մարդիկը», որոնք կոչված էին օրէնսդրական գործունէութեան համար, այլ ոչ Վիբորգեան կոչը խմբագրելու, հարկադրված եղան այդ կոչը կազմելու: Կարելի է նրանք ընդհանրապէս դէմ են հարկերի և զօրքի գաղափարին: Ամենևին ոչ. մինչև իսկ ամենածայրայեղ պատգամաւորներն անգամ ընդունում են թէ առաջինը և թէ երկրորդը, թէև, ճիշտ է, միլիցիայի ձևով: Դրա պատճառների մասին մեղադրական իշխանութիւնը խոհեմութեամբ լռում է, և լաւ է անում, որովհետև այլապէս նա մի այնպիսի խոշոր յանցանքի կը հանդիպէր, որ չէ զետեղվում ոչ միայն քրէական օրէնք. 129-դ յօդուածի շրջանակի մէջ, այլ և բոլոր օրէնքների բոլոր յօդուածներում: Այդ ծանր յանցանքը՝ Դուման ցրելու ակտն էր»:

— Ես չեմ կարող թոյլ տալ,—ընդհատում է նրան նախագահը,—որ ճառերի մէջ արտայայտվին ոչ յարգանք կառավարչական իշխանութեան ակտերի վերաբերմամբ, ևս առաւել Դուման ցրելու ակտի մասին, որ կատարվել է Միապետի կարգադրութեամբ:

Ռամիշվիլին այդ պատճառները բացատրելու համար հարկաւոր է համարում մի յետադարձ հայեացք նետել դէպի անցեալը:

—Այն կարգերի մէջ, ուր մենք ենք ապրում, մաքառում են իրար դէմ երկու սկզբունքային գաղափարներ. երկու անհաշտ սկզբունքներ՝—հին ֆէօդալիզմի մնացորդները և նոր բուրժուազական կարգերի սաղմերը: Դեռ ևս երկու-երեք տարի սրանից առաջ ազատ մտածմունքի ամեն մի արտայայտութիւն համարվում էր յանցանք: Այն ժամանակ թագաւորում էր հին կարգերի համբաշխի ոգին: Հոկտեմբերի 17-ին աշխարհ եկաւ նոր կարգերի, նոր կեանքի աւետաբերը: Դա նոր ոյժերի ակտիվ առաջխաղացութեան հետևանքն էր, որոնց գրոհը հին իշխանութիւնը անկարող եղաւ զսպել և ստիպված եղաւ հաշտութիւն կնքել: Հին իշխանութիւնը զոհաբերեց իւրերի դրութիւնը և ճանաչեց նրան, և այդ բանը արտայայտվեց կոմս Վիտտէի ամենահպատակ զեկուցման մէջ: Երկիրը մտաւ նոր ուղին, բայց երկար չը տևեց այդ: Փոփոխութիւնը շուտ կատարվեց: Ժողովուրդը յափշտակվեց իր յաղթութեամբ և հաւատ ընծայեց:

Այստեղ Ռամիշվիլին սաստիկ գունատվում է և թուլացած ընկնում մեղադրեալների աթոռի վրա, հեծելով «վատ եմ զգում»: Մօտ են վազում պատգամաւոր բժիշկները, բայց Ռամիշվիլին այդ միջոցին ուշաթափվում է:

Դատարանը լուռ է, բայց երբ նախկին պատգամաւորների և պաշտպանների խմբերից լսվում են պահանջող ձայներ՝ «ընդմիջում, ընդմիջում», նախագահը 10 րօպէ ընդմիջում է նշանակում:

Նիստը վերսկսվում է ժամը 3-ին և դատավարութիւնը շարունակվում է, սակայն այդ օրը Ռամիշվիլին, հիւանդութեան պատճառով, բացակայում է:

Դեկտեմբերի 15-ին, նիստը վերսկսվելուն պէս, խօսքը վերապահվում է Ռամիշվիլուն, որ արդէն կազդուրվել էր, և հնարաւորութիւն է տրվում նրան շարունակելու իր նախորդ օրվայ բացատրութիւնը:

Նրա այդ օրվայ խօսելը ճառ չէր իսկապէս, այլ մի տեսակ մենախօսութիւն մեղադրեալի և նախագահի միջև, որը մի քանի անգամ ընդհատեց Ռամիշվիլուն, յիշեցնելով որ կը զրկէ նրան խօսքից:

Սակայն այդ ոչինչ չօգնեց և նա վերջացրեց իր ճառը: Նա խօսեց ժողովրդական յոյսերի և նրանց խորտակման մասին:

— Վիբորգեան կոչը,—ասում է նա,— պատմականօրէն անխուսափելի բողոքի մի ակտ էր, որը սօց.-դեմօկրատիայի աչքում համարվում է թոյլ պատասխան զօրեղ հարուածի դէմ:

Ճառախօսը շօշափում է ապա այն հարցը, թէ ինչպէս վերաբերվեց Եւրօպայի հասարակական կարծիքը առաջին Պետական Դումայի ցրելու ակտին, և ապա կրկնում է անգլիական մինիստրներից մէկի յայտնի ասացուածքը, որը Ռամիշվիլին դասաւորում է այսպէս.

— Սպանեցին Դուման... Կեցցէ Դուման:

Այնուհետև խօսելով Վիբորգեան բողոքի սահմանադրականութեան մասին, շեշտելով որ ժողովուրդը իրաւունք ունի փակելու իր քսակը, երբ խախտվում է իր իրաւունքները, վերջացնում է ճառը, յայտարարելով թէ այժմ մնում է, որ դատարանը պատիժը նշանակէ, բայց առաջին Դումայի անդամների դատավճիռը արդէն արտասանված է թէ ամբողջ երկրի և թէ Եւրօպայի կողմից:

— Խօսքը այժմ պատկանում է ժողովրդին,—վերջացնում է իր ճառը Ռամիշվիլին:

ԲՆԱԿԱՆ ԱՂԷՏՆԵՐ

VI

Նոր-Բայազէտ, 10 դեկտեմբերի

Ընթերցողներին քաջ յայտնի է, որ մեր քաղաքի և մօտակայ Նորադուզ և Ղշլաղ գիւղերի հողագործ ազգաբնակութեան մեծամասնութիւնը բնական պատահարներից սարսափելի վնասներ կրեց և վերջին ծայր աղքատութեան մէջ ընկաւ: Այդ հանգամանքը Նորադուզի վերաբերմամբ իր գագաթնակէտին հասաւ, որտեղ մարդիկ կերակրվում են գետնախնձորի խաշուրդով, իսկ Ղշլաղում այդ աղէտը մի որոշ դասակարգի մարդկանց մասամբ է միայն վնասել, ուստի սրանք կարող էին մի կերպ եօլա գնալ և ինքնուրոյն կերպով իրանց գլուխը պահել մինչև նոր հունձը: Այդ պատճառով իսկ Նոր-Բայազէտի նպաստամատոյց մասնաժողովը նպաստները բաժանելիս աւելի նպատակայարմար էր դատել օգնութեան գալ բոլորովին չքաւոր և աղքատ դասակարգին և ոչ թէ ունևորներին. հետևապէս վերջիններիս նպաստներից բաժին տալու չէին: Եւ ահա ամսիս 23-ին, երբ Նորադուզից յետոյ հերթն եկաւ Ղշլաղին, որտեղ Բագուից եկած ալիւրը պիտի բաժանվէր չքաւորներին, այդ գիւղի ունևոր դասը նոյնպէս պահանջ յայտնեց՝ իրան էլ «մասն ու բաժին» հանել նպաստներից: Սակայն մասնաժողովը չընդունեց այդ առաջարկութիւնը և մերժելով նրանց պահանջը՝ կամեցաւ բաժանել նպաստները միմիայն չքաւորներին, որոնք ցուցակագրված էին թէ Ս. Տէր-Պօղոսեանցի ձեռքով և թէ գիւղի քահանայի և այլոց ցուցմունքով: Բայց այնուամենայնիւ, ունևոր դասը արգելք դառնալով՝ բաժանել նպաստները միմիայն չքաւորներին, ալիւրը ստիպված յետ բերվեց գիւղից Նոր-Բայազէտ, որտեղից պիտի բաժանվէր աղէտեալներին—Ղշլաղի գիւղացիներին: Բայց թող չը զարմանայ ընթերցողը, որ ասելու լինեմ, երբ նպաստամատոյցը ալիւրը յետ էր բերում Ղշլաղից, այդ գիւղի «պատուաւոր մարդիկ», որոնք իրանք էլ երևի «բաժին» էին ցանկանում ստանալ, չէին թողնում որ նպաստները յետ բերվեն քաղաք, և այդ պատճառով մասնաժողովը ստիպված էր դիմել պօլիցիայի օգնութեան, որ կարգադրէր ստրաժնիկներին հսկողութեամբ բերել նպաստները Նոր-Բայազէտ: Այդ հանգամանքը ղշլաղցիների կողմից ոչ մի բանի նման չէր և իր վատ ապաւորութիւնը թողեց շատերի վրա: Դա մեր գիւղացիների ամենաթոյլ կողմն է, որ ցոյց է տալիս նրանց նեղ աշխարհահայեցողութիւնը դէպի իր աղքատ դրացին: Ուրիշ խօսքով՝ դա ուղղակի գիւղական ունևոր դասի՝ իր հարևան աղքատի ձեռքից հացը խլելն է նշանակում... Այսպէս թէ այնպէս, այսօր, նոյեմբերի 26-ին, այդ նպաստները բաժանեցին Ղշլաղի կարօտեալներին այստեղից—Նոր-Բայազէտից:

Որքան յիշում եմ, այդպիսի մի դէպք էլ պատահեց այս տարվայ գարնանը Վերին-Ղարանլուղ գիւղում, որտեղ պ. Ս. Տէր-Պօղոսեան դարձեալ նպաստ էր ցանկանում բաժանել չքաւորներին: Վերին-Ղարանլուղցիք բոլորը անխտիր պահանջում էին, թէ նպաստները բաժանեցէք թէ ունևորներին և թէ չունևորներին, ինչպէս արեցին Ղըշլաղցիք: Բայց այն ժամանակ նոյնպէս մասնաժողովը Վ.-Ղարանլուղից յետ դարձրեց ալիւրը Նոր-Բայազէտ, որտեղից բաժանեց մի մասը Վ.-Ղարանլուղի չքաւորներին, միւս մասը՝ մի ուրիշ գիւղի աղէտեալներին:

Սակայն թող հասկանան մեր գիւղական համայնքները, որ նպաստները բաժանվում են ամեն տեղ միմիայն ծայրայեղ աղէտեալներին, որոնց անբուժելի հարուած են հասցրել բնական աղէտները, իսկ մի փոքր ունևոր ընտանիքները կարող են ինքնուրոյն միջոցներով իրանց գլուխը պահել: Ուրիշ բան է, եթէ նպաստամատոյցի միջոցները ընդարձակ լինէին. այն ժամանակ այս բոլորը «մասն ու բաժին» կունենային: Բայց դժբաղդաբար մասնաժողովի տրամադրութեան տակ այնքան գումար կայ, որ հազիւ թէ մի փոքր բաւականութիւն տայ բուն աղէտեալների կարիքներին: Գիտենք, որ աղէտը ընդհանուր է, բայց պէտք է մի կերպ դիմանալ և չը խլել հացը աղէտեալների ձեռքից...

Այդ է առաջին և գլխաւոր պայմանը:

Որսորդ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Ժողովրդական համալսարանների վարչութեան վերջին նիստում, որ տեղի ունեցաւ ուրբաթ, դեկտեմբերի 21-ին, Ա. Քալանթարի նախագահութեամբ, մշակվեց ծրագիր առաջիկայ գործունէութեան:

Որոշվեց ներկայ տօներին հրաւիրել դասախօսութիւնների համար Ն. Դէրժավինին, որ եկել է Պետերբուրգից Թիֆլիս մի երկու շաբաթ մնալու համար: Դէրժավինը կը կարդայ մի շարք դասախօսութիւններ գրականութիւնից:

Օգտվելով այն դէպքից, որ պրօֆէսօր Մառը Կովկասումն է, խնդրել, որ նա ժողովրդական տանը կարդայ մի կամ երկու դասախօսութիւն:

Տալ կօնցերտ ամսի 26-ին ցերեկով, սովորական էժան գներով:

Թոյլ տալ տօներին դադարեցնելու դասընթացքները զանազան սեկցիաների դըպրոցներում:

Հոգ տանել, որ ժողովրդական տան դահլիճը տաքացվի այն օրերը, երբ ժողովուրդ է հաւաքվում:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Գաղտնի տպարան

Դեկտ. 21-ից Թիֆլիսի դատաստանական պալատի յատուկ ատեանը դասակարգային ներկայացուցիչների հետ ձեռնարկեց քննել Հաւլաբարում 1906 թ. ապրիլի 15-ին գըտնըված ստորերկրեայ գաղտնի տպարանի գործը: Եթէ յիշում են մեր ընթերցողները, «Մշակում» տպվեց մանրամասնութիւնները: Տպարանը գտնվեց Դաւ. Ռօստոմաշվիլու տանը. բացի տպարանից երևան հանվեցին նաև մեծ քանակութեամբ ռազմամթերքներ, ռումբեր և գործիքներ:

Դատարանին են յանձնված այդ գործի առթիւ թիֆլիսեցի Դաւ. Ռօստոմաշվիլի, իշխ. Կ. Անդրօնիկով, գիւղացի Սօֆիա Ումելիձէ, ազն. Իվ. Իմնաձէ և զինւորական-բժշկական ակադեմիայի նախկին ուսանող Իվ. Օրլաշվիլի, որոնք մեղադրվում են այն բանում, որ 1905 թ. և 1906 թ. առաջին կիսում մասնակցել են «Ռուսաց սօց.-դեմ. բան. կուսակցութեան», նպատակ դնելով տապալել գոյութիւն ունեցող այժմեան ռուսական պետական կազմը, որի համար էլ սարքել են տպարան, տպագրել հակակառավարչական գրուածքներ, թռուցիկներ ռուսերէն, վրացերէն և հայերէն լեզուներով:

Մեղադրեալներից չէ գտնվել միայն Ղաբաջևը:

Պալատը որոշեց գործը քննել վկաներից մի քանիսի բացակայութեամբ և կարդալ նրանց ցուցմունքները:

Պաշտպանում են երդուեալ-հաւատարմատարներ՝ Մ. Գրուզէնբերգ և Իս. Դօլուխանով:

—

Կովկասեան զինւորական դատարանին են յանձնված 1) 1-ին կովկասեան հրացանաձիգ գնդի կամաւոր զինւոր Ալէքսանդր Վեսելօվսկին, որ մեղադրվում է այն բանում, որ այս տարվայ սեպտ. լոյս 24-ի գիշերը Թիֆլիսում, գտնվելով Կիրօչնի փողոցում հասարակական տանը, առանց կանխամտածված մտադրութեամբ, բայց սպանելու նպատակով, կրակեց նոյն տան մէջ գտնվող Գէօրգի Կարապետովի վրա հրացանից և մահացու վէրք հասցրեց նրան, որից և նա ճանապարհին մեռաւ. 2) Քութայիսի նահանգի գիւղացիներ՝ Մօխեյ Կապրաձէ, Իօնա Կուխալէյշվիլի, Դաւիդ Կեյաձէ և ստաւրօպօլցի Պետր Դօլդուշին, որոնք մեղադրվում են Սօչի քաղաքի և սօչինսկի վիճակում զինված ապստամբութեան մասնակցելու մէջ:

ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Միջնակարգ և ստորին դպրոցների աշակերտների համար որոշված կանոններով արգելված է նրանց յաճախել կլուբները, ոգելից խմիչքեղէն վաճառող կօնդիտէրսկիները, ռեստորանները, պանդոկները և բոլոր խմիչքատները: Առաջարկում եմ պ. պ. պրիստաւներին՝ յայտնել յիշեալ հաստատութիւնների, ինչպէս և Վերայի այգիների տէրերին, յատուկ պարտաւորագրեր վերցնելով բոլորից, որպէսզի արգելեն ուսանող սերունդին ոտք կոխել իրանց հաստատութիւնները: Եթէ նկատվի, որ նրանցից որևէ մէկը այդ կարգադրութիւնը խախտել է, իսկոյն արձանագրութիւն կազմել, գրել թէ տիրոջ և թէ աշակերտների անունները, տոմսերը եղած տետրակներից և ապա հեռացնել նրանց, իսկ վերջում արձանագրութիւնը ներկայացնել ինձ: Նոյնպէս պարտաւորեցնել թատրոններում և ցիրկում բուֆէտ պահողներին, որ խմիչքեղէն չը ծախեն դպրոցական ուսանողներին:

Փողոցում նկատելով, որ աշակերտները իրանց անվայելուչ են պահում, ոստիկանութեան պաշտօնեաները պարտաւոր են քաղաքավարութեամբ, բայց յամառ կերպով, կանգնեցնել նրանց և, ընդդիմադրութեան դէպքում, տանել նրանց մօտակայ ոստիկանատունը, նրանց ով լինելը պարզելու համար:

Գրելուց յետոյ, նրանց պէտք է բաց թողնել. իսկ եթէ նրանք աշակերտական տետրակներ չունենան կամ սկսեն անկարգ պահել իրանց, արձանագրութիւն կազմել և հեռախօսով յայտնել այն դպրոցի կառավարչին, ուր ուսանում է բռնվածը:

Ոչ մի դէպքում թոյլ չը տալ, որ փողոցում և հասարակական տեղերում կողմնակի անձինք խառնվեն ոստիկանութեան գործերի մէջ, այլ ոստիկանութեան գործողութիւններից դժգոհ կամ վկայ լինել ցանկացող անձանց առաջարկել մտնել ոստիկանատուն կամ ինձ մօտ, իմ վարչութիւնս, ուր նրանց ցուցմունքները կը լսվեն և կարձանագրվեն:

Թատրոններում աշակերտներից պահանջել, որ կատարեն բոլոր կանոնները, և թոյլ չը տալ նրանց խմբերով խռնվել մի տեղում և զբօսնել մուտքերում և առանձնասենեակներում: Ընդ սմին ոստիկանական պաշտօնեաները պէտք է իրանց միշտ քաղաքավարի պահեն և ոչ մի առիթ չը տան կշտամբանքների, նկատողութիւնների, յամառութեան և կոպտութեան:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ասխաբադ, 12 դեկտեմբերի

Այստեղ Խրիմեանի մահվան առիթով որոշում կայացաւ հայոց դպրոցի համար սեփական շէնք կառուցանել «Խրիմեան» անունով: Հաւաքվել է 2000 ռուբլի և յոյս կայ, որ կը հաւաքվի 8—10,000 ռուբլի:

—

Ասխաբադ, 6 դեկտեմբերի

Դեռ ևս անցեալ տարվանից Ասխաբադի ծխական դպրոցի հոգաբարձութիւնը ծրագրում էր ձեռնարկել դպրոցի նոր շէնքի կառուցման:

Տեղիս դպրոցի այժմեան շինութիւնը իր նեղ ու մութ դասարաններով, զուրկ կանոնաւոր ուսուցչանոցից, միջանցքներից և նախասենեակից, չէ համապատասխանում այն բոլոր պահանջներին, որոնք անհրաժեշտ են նօրմալ պայմաններում: Անցեալ տարվայ հոգաբարձութիւնը, շնորհիւ իր թուլութեան և, որ ամենագլխաւորն է, բաղկացած լինելով աչքի ընկնող հարուստներից, զգալով որ իրանց ձեռնարկելիք գործը իրանցից մեծ զոհողութիւն է պահանջում, նախ՝ որպէս ունևոր դասակարգի պատկանող անձնաւորութիւններ և երկրորդ՝ որպէս մի կրթական հիմնարկութեան հոգաբարձուներ, բարւոք համարեցին իրանց փէշերը թափ տալ իրանց համար բոլորովին աննպաստ և մեծ զոհողութիւն պահանջող ձեռնարկութիւնից, թողնելով այդ բանը իրականացնել ուրիշներին:

Դեռ ևս անցեալ տարվանից դպրոցի նոր շէնքի համար կայացել են մի քանի ծխական ժողովներ, ուր ընտրվել են մասնաժողովներ հասարակութեան զանազան խաւերից, որոնք պիտի ժողովէին այն գումարը, որը անհրաժեշտ է դպրոցի նոր շէնքի համար: Դպրոցի նոր շէնքը պահանջում է մօտաւորապէս տասը հազար ռուբլի: Այդ անհրաժեշտ գումարը տեղիս վաճառական դասակարգի համար մի աննշան բան է. եթէ ուզենան, առանց զգալի նեղութիւն կրելու, միայն մի քանի աչքի ընկնող անձնաւորութիւններ կարող են ամբողջ բեռը իրանց վրա առնել, ազատելով չունևոր դասակարգին այդ ծանրութիւնից: Մինչև այժմս այդ բանը չէ եղել և չի էլ լինի. նրանք իրանց պինդ փակած գրպանները բացում են միայն այն ժամանակ, երբ զանազան բաղդախնդիր և մութ անձնաւորութիւններ դաշոյնի կամ մաուզերի ծայրին են ցոյց տալիս. և նրանք այդպիսի դէպքերում հազարներ են բաց թողնում, առանց հաշիւ տալու իրանց՝ թէ ուր են գնում այդ գումարները: Որովհետև սա մի կրթական հիմնարկութիւն է և համոզված են, որ ոչ ոք նրանցից բռնի կերպով փող չի առնի, միանգամայն իրանց հանգլխատ են զգում։ Իրականութիւնը մնում է կրկին իրականութիւն. այդ անհրաժեշտ գումարի մեծագոյն մասը կրկին ընկնում է միջին և չունևոր դասակարգի վրա։

Անցեալ տարվայ հոգաբարձական կազմը, դպրոցի շէնքի և դպրոցի ընթացիկ ծախսերի համար մասնագրած գումարները հաւաքելու ծանրութիւնից ազատվելու համար, ամառը, յուլիս ամսին տուեց իր հրաժարականը, թողնելով ամեն բան միանգամայն երեւնիվայր։ Ամարային շոգերի պատճառով հոգաբարձական նոր ընտրութիւնները կայացան սեպտեմբերին։ Այս անգամ հոգաբարձական կազմի մէջ մտել են այնպիսի անձնաւորութիւններ, որոնց վրա կարելի է միանգամայն յուսալ։ Նրանք արդէն ձեռնարկել են մասնագրութեան գործը և մտաւորապէս ուրուագծել են դպրոցի նոր շէնքի յատակագիծը։ Հաւանական է, որ մօտ ապագայում կը ձգեն դպրոցի նոր շինութեան հիմքը։ Ինչպէս լսել ենք կողմնակի աղբիւրներից, հոգաբարձութիւնը նոր շէնքը ուզում է հիմնել կրկին եկեղեցու բակում, նրա արեւելեան կողմի բաց տարածութեան վրա, ուղիղ տեղիս արական գիմնազիայի դիմացը։ Խորհուրդ ենք տալիս յարգելի հոգաբարձութեանը նոր շէնքը հիմնել եկեղեցու բակից դուրս մի ուրիշ տեղ, խուսափելու համար մի շարք անյարմարութիւններից։

Անցորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յիշեցնում ենք հայ հասարակութեան, որ այսօր, դեկտեմբերի 23-ին, երեկոյեան ժամը 9-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում, յօգուտ Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան, տեղի կունենայ ծաղկազարդ երեկոյթ։ Կը ներկայացնեն օպերաներից մի քանի տեսարաններ հայերէն լեզուով։ Յուսով ենք, որ հայ հասարակութիւնը, աչքի առաջ ունենալով նպատակը և երեկոյթի ճոխ ծրագիրը, կը նպաստէ երեկոյթի լիակատար աջողութեան՝ այդ օրը լցնելով Արտիստական ընկերութեան դահլիճը։

◆ Մեզ հաղորդում են, որ Ջիվանշիրի գաւառի Թալիշ գիւղում գտնվող միդասեան դպրոցը, շնորհիւ Նիկողայոս Ժամհարեանի նուիրած 700 րուբլու, դարձել է երկդասեան և ուսումը կանոնաւոր շարունակվում է։

◆ Թիֆլ. պօստ-հեռագրական գրասենեակի կառավարիչը խնդրում է մեզ յայտնել, որ պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեան պետի թոյլտւութեամբ, անցեալ տարիների նման, ընդունվում են շնորհաւորական հեռագրեր Նոր-Տարվայ առիթով։ Այդօրինակ հեռագրերի վրա պէտք է մակագրել «НОВОГОДНЯЯ», որի համար վճար չի լինի։ Այդ հեռագրերը հերթով կը հասցվեն ըստ պատկանելոյն 1908 թ. յունվարի 1-ի առաւօտեան ժամը 8-ին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, յօգուտ քաղաքային հոգեկան հիւանդների ապաստարանի, դեկտ. 27-ին ապաստարանի շինութեան մէջ սարքում է տօնածառ։

◆ Վրաց հոգեւորականութեան համագումարի դեկտեմբերի 20-ի նիստում քննվեց թեմական կառավարութեան հարցը։ Երկար վիճաբանութիւններ յարուցեց կղերի ընտրութեան սկզբունքի հարցը։ Քահանաների մի խումբ առաջարկեց վերահաստատել նախկին կարգը, այսինքն թեմական քահանաները և գործակալները նշանակվելու են դարձեալ թեմական առաջնորդներից. աւելի ազատամիտները կողմնակից էին ընտրողական սկզբունքին։ Հարցը դրվեց քուէարկութեան. ձայների մեծամասնութեամբ անցաւ ընտրողական սկզբունքը։ Հոգեւորական դառնալ ցանկացողները, որոնք ի հարկէ ունեն կրթական ցենզ, խնդիր են ներկայացնում շրջանային գործակալական խորհրդին. սա յանձնում է այդ խնդիրը ծխական ժողովին, որին և վերապահված է թեկնածուներից ընտրութիւն կատարելու իրաւունքը։

◆ Դեկտեմբերի 17-ին Ախալցխան փողոցում ռմբաձիգի ով լինելը պարզել են. նա Թիոնէթի գաւառի բնակիչ Ալեքսէյ Լէկիշվիլին է։

◆ Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Ժողովրդական համալսարանի երկաթուղային սեկցիան անկեղծ շնորհակալութիւն է յայտնում գլխաւոր արհեստանոցների ինժեներ Ն. Միրզոյեվին՝ սիստեմատիկ դասախօսութիւնների ժամանակ գոյացած 20 րուբլի դիֆիցիտը իր միջոցներից ծածկելու համար»։

◆ Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան վարչութիւնը, ի նկատի առնելով որ բազմաթիւ աղքատներ ըստ սովորութեան առաջիկայ տօների առիթով դիմում են ընկերութեան օգնութեանը, ընկերութեան վարչութիւնը յատուկ այդ նպատակի համար ընդունում է նուէրներ դրամով, մթերքներով և շորով, ամենայն օր, ընկերութեան գրասենեակում (Աբաս-Աբադսկայա հրապ., տուն № 7). վարչութիւնը լրագրութեան միջոցով կը տայ հաշիւ թէ ստացած նուէրների և թէ նրանց գործադրութեան մասին»։

◆ Վերջերս վախճանված Թումանովի ժառանգները 500 րուբլի են նուիրել Թիֆլիսի Սուրբ-Կարապետեան հայոց դպրոցի օգտին։

◆ Բանտից ազատել են Թիֆլիսի քաղաքային վարչութեան ծառայող Մամուլովին։

◆ Թիֆլիսի Ջրկիրները խնդրամատոյց են եղել՝ ազատել իրանց քաղաքային տուրքերը վճարելուց։

◆ Ռոստոմ Եսաձէի խմբագրութեամբ այսօր լոյս տեսաւ զինւորական մի լրագիր՝ «Кавказская Армія» անունով։

◆ Թիֆլիսի Նահանգապետը առաջարկել է մէշչանների ուպրավային՝ 80 լիազօրների ընտրութիւնը կատարել 1908 թ. յունվարի վերջը։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Վիբորգեան կոչի գործը քննելու ժամանակ, «Тов.» լրագրի ասելով, Մոսկվան լարված ուշադրութեամբ հետեւում էր դատավարութեան ընթացքին։ Դեռ ևս սկզբի օրերից տեղական առաջադէմ հասարակական շրջաններում միտք էր յղացել ջերմ մասնակցութիւն ունենալ հասարակական առաջին ընտրեալների, առաջին ժողովրդական ներկայացուցիչների ապագան անօրինելու գործում։ Նրանք ի նկատի ունէին, որ, եթէ դատը վերջանալու լինի մեղադրական դատավճռով, դատարանը կարող է պատժից խուսափողների առաջն առնելու նպատակով մինչև գործի վճռաբեկումը մեղաւոր ճանաչվածների համար նախապէս դրամական պահանջել։ Դրա պատճառով վերջին օրերս Մոսկվայի հասարակութեան մէջ եռանդուն ստորագրութիւն էր սկսված դրամական գումար պատրաստելու և ներկայացնելու ժողովրդական ներկայացուցիչների փոխարէն։ Ստորագրութիւնը տուել է մի պատկառելի գումար։

◆ Յաժառ լուր է պտտում, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր ֆոն-Կաուֆմանը վճռել է հրաժարական տալ։ «Тов.» լրագրի ասելով, հրաժարականը կապ ունի աջակողմեանների կողմից Պետական Դումայի մէջ բարձրագոյն դպրոցների խլրտումների առիթով արված հարցապնդումի հետ։

◆ Ֆինլանդական գեներալ-նահանգապետի օգնական գեներալ-մայօր Զէյնին շնորհված է Ստանիսլավի I կարգի շքանշանը։ Գեներալ Զէյնին, ինչպէս յայտնի է, ֆինլանդական հասարակական կարծիքի ճնշման տակ և սենատի առաջարկութեան համաձայն մօտ օրերս յետ էին կանչել իր նոր պաշտօնավայրից։

◆ Պուտիլովի գործարանում պատուէրների պակասութեան պատճառով մեծ թւով բանւորներ են արձակում։ Նորերումս 1050 բանւորներ են հեռացված, որոնց գլխաւոր տոկոսը ընկնում է վագոններ պատրաստող բաժանմունքի վրա։ Վերջիններիցս հեռացրել են 800 հոգի։ («Русь»)

◆ Տօների արձակուրդը յայտարարվելուն պէս, Դումայի հնամենական պատգամաւորներից մի քանիսը, ինչպէս «Русь» լրագիրն է ասում, նախապատրաստութիւններ պիտի տեսնեն դեկտեմբերի 22—23-ին Մոսկվայում հնամենականների համագումար հրաւիրելու համար։ Համագումարին մասնակցելու են Գուչկովը, Կարաուլովը և Պլեւակօն։

◆ Արդարադատութեան մինիստրութիւնը շրջաբերականներով առաջարկել է քննիչներին ամենակարճ ժամանակում տեղեկութիւններ հաղորդել անհետանք թողնված գրական գործերի վերաբերմամբ, յիշելով միաժամանակ թէ ինչ պատճառների վրա հիմնվելով թողնվել է անհետանք յարուցված քննութիւնը։ («Т.»)

◆ Երկաթուղային կառավարիչների համագումարը, որ հաւաքվել էր ամարային երթեւեկութիւնների հարցը կարգաւորելու համար, որոշել է մտցնել մի քանի նոր արագընթաց ուղղակի գնացքներ։ Այդպիսիների թւումն է գտնվում, ի միջի այլոց, Մոսկվա-Խարկով-Ռոստով և հանքային Ջրերի միջև բանող ուղղակի գնացքը, որ պէտք է ծառայէ դէպի Կովկաս գնացող Արևմտ. Ռուսաստանի բնակիչների համար։ Մտցվում է նմանապէս Մոսկվա-Վարշավա տանող նոր կուրիերական գնացքը ի լրումն ներկայումս գոյութիւն ունեցող արագընթաց գնացքների։ («Нов. Вр.»)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲԷԼԵԱՆԻՆ

Յարգելի յոբելեար.

Ողնախի հայ հասարակութիւնը պատիւ է արել ինձ, ընտրելով իր ներկայացուցիչ ձեր քառասնամեայ յոբելեանին և պարտք դրել վրաս յայտնել իր խորին համակրանքը ձեր երկարամեայ բեղմնաւոր գործունէութեան համար թատրոնական ասպարէզում և շնորհաւորել այն գերագոյն բաղէն, որ բաժին է ընկնում միմիայն ընտրեալներին։

Ինչ-ինչ հանգամանքների շնորհիւ գրաւոր լիազօրութիւնը ստացայ յոբելեանական տօնախմբութիւնից յետոյ, ամսիս 21-ին, ուստի պարտքս եմ համարում լրագրութեան միջոցով ներկայանալ ձեզ իբրև պատգամաւոր հայրենակիցներիս կողմից և խնդրել ընդունել նրանց անկեղծ ցանկութիւնը միանալու այն բազմաթիւ հասարակութեան հետ, որ գիտէ ոգեւորվել ու գնահատել արժանաւոր անհատի։ Այդ ոգեւորութիւնը թէև նման է թատրոնի վերնայարկի պատանի այցելուների անկեղծ ու մաքուր հրճուանքի և ուրախութեան, որ արտայայտվում է լոկ ծափահարութիւններով, սակայն չափազանց թանգ է իսկական արտիստի համար այդ անկեղծ վարձատրութիւնը։

Ուրեմն լիայոյս եմ, որ գեղեցիկ Ալազանի հովտից ուղղած դէպի ձեզ յարգանքները տեղ կը գտնեն ձեր սրտի խորքում։

Գ. Բաշինջաղեան

ՖԷԼԻԷՏՕՆ

Դուք

Ի զուր էք գանգատվում, թէ ձեզ Մոծակը աչքաթող է անում։

Ճիշտ է, որ այս երկու կիրակի իմ ես-ով սկսեցի ու աւարտեցի, բայց ինձ գովելով չէի զբաղված, որ նախանձեցիք։

Եթէ ձեր գովասանքը այսքան ուշացաւ, ներողութիւն եմ խնդրում։ Ներողութիւն եմ խնդրում, որ ձեզ այսպէս երկար խնայեցի և աւելի շուտ չը բարկացրի։

—Բարկանամ...

Այո, գուցէ վիրաւորվել, որովհետև վճռել եմ բացարձակ յայտնելու, որ

Դուք, բոլորդ ի միասին, իսկական ազատութեան թշնամիներ, նրան ատող գերիներ էք և ստրուկներ...

—Գերինե՞ր, ստրուկնե՞ր...

Մի, մի վրդովվէք, խնդրեմ, քիչ համբերութիւն ունեցէք լսելու. գիտեմ, մի որոշ կարգի մարդկանց նման դուք ազատութիւնը այն չէք հասկանում, որ սուտ ու մուտ բաներ փչէք, և երբ ձեր կեղծ դիմակը պատռեն, դուք էլ նրա գլուխը պատռէք, երբ ասեն ձեզ՝ մարդասպան էք. դուք էլ վռնդէք նրան սպանէք, երբ ասեն՝ գող ես, աւազակ ես, յարգելի իշխան, դու իսկոյն հանես նրան կախաղան։

Եւ ոչ էլ այն ազատութիւնը, որ երէկ խոստանաս, այսօր ուրանաս, որ երէկ օրէնքներից ճառես, այսօր ոյժով սպառնաս, և երբ ասեմ՝ ձեզ էլ չեմ հաւատում, դնես ինձ մութ զնդանում։

Թէ թշնամի էք ազատութեան, երբեք չեմ ուզում ասած լինել՝ թէ դուք այն ազատասէրներին եղէք բարեկամ, որոնք գոփել, կողոպտելն ու թալանելը նոր արհեստ և նոր ապրուստի միջոց դարձրած, անձնական թէ ազգային պատիւը ոտքի տակ ձգած, ամօթ, խիղճն ու Աստուածը ուրացած, քրտինք ու աշխատանքից աւելի արիւնը սիրելով, ամեն օր ազատ սպանում են ու փախչում և հազարաւոր անմեղների կեանքը վտանգի ենթարկում։

Ո՛չ, այս գազանական ազատութեան մասին չէ իմ խօսքը։

Կրկնում եմ, դուք իսկական ազատութեան ատողներ, գերիներ էք և ստրուկներ։

Իսկ թէ ո՞րն է իսկական ազատութիւնը...

Ի՞նչպէս թէ գերիներ... Համեցէք։

Դու

Վաճառական ես. շատ էլ աքնում, չարչարվում ես, ընդունենք՝ չես էլ ստում, չես էլ զրկում ոչ ծառայողին, ոչ մուշտարուն, ոչ էլ փարբիկանտին, շատ էլ ապահոված ես ու հարուստ. արդեօք գերի՞ չես կօպէկին։ Եթէ հարևանդ քեզնից աւելի հարստացաւ, դու գերի՞ չես նախանձին։ Կինդ, որդիդ ու աղջիկդ գերի՞ չեն շռայլութեան։ Ամուրի ես՝ գերի՞ չես գեղխութեան։ Իսկ եթէ հայ գրականութեան, դպրոցի և բեմի ծաղկման, զոհողութիւնների ենթակայ հայ գործիչներին քիչ ապահովացնող ֆոնդի հարց լինի՝ դու կուրութեան գերի, խուլութեան ստրուկ չե՞ս դառնայ։

Էլ ո՞րտեղ մնաց քո իսկական ազատութիւնը։

Տուն ունես, տեղ ունես, մեծ էլ արդիւնքներ ունես և այժմ փոքրիկ ստրուկները առաջարկում են քեզ այս և այն նախագահի չաղլիկ պաշտօնը. լաւ էլ համոզված ես, որ այդ քո խելքի բանը չէ, որ այդ տեղի համար կան ձեռնհաս ոյժեր. արդեօք կը հրաժարվե՞ս, գերի չե՞ս դառնայ նոր մեծ ռոճիկին ու դիրքին։ Եւ այդպէս խորհրդի անդամ, հոգաբարձու, դիրեկտոր կամ կառավարիչ ես, քո ես-ը և շահերը թո՞յլ կը տան քեզ, որ գերի չը դառնաս անարդարութեան։

Դու

Քահանայ ես. թէ աշխարհի հզօրներին պաշտպան չես՝ անպատճառ էակները թողած լոկ ծէսերին ես գերի։

Թէ դու հոււ հնազանդ չես կապիտալի ոյժին, հապա թէ գերի չը լինես հարուստի պսակի ու թաղման կարգը երկար ձգձգելուն։ Անկարծիք, ձեզ շատ չեմ գովի, որ վիրաւորվէք, միայն դուք չէք, որ չինօվնիկ էք, այդ ցաւով հիւանդ գերիներ շատ կան և վարդապետների և եպիսկոպոսների մէջ։

Երբ կարդում եմ մեր Փրկչի աւետարանը՝ հիանում եմ ձեր ընթացքով։

Լսենք մի անգամ էլ այս սուրբ խօսքերը.

«Ես եմ Լոյս և Ճշմարտութիւն»։

«Ով եղբօրը ատի, Ինձ է ատում»։

«Ինձ տեսած, թէ Իմ Հօրը միևնոյն է»։

«Եղէք կատարեալ, ինչպէս ձեր Երկնաւոր Հայրն է կատարեալ»։

«Կարծեցի, թէ դուք աստուածներ էք»։

Երբ նա՛ այդ «կատարեալ Մարդու Որդին» մեզ ու ձեզ իրաւունք է տալիս Իր և Իր Հօր կատարելութեան հասնելու՝ էլ մինչև ե՞րբ խեղճ ժողովրդին այդ լոյս աստուածանից հեռացնէք և ձեզ հետ խաւարին գերի դարձնէք։

Մոծակ Մարակեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 դեկտեմբերի

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը իր այսօրվայ երեկոյթի ծրագրում նշանակել է ի միջի այլոց «Տրուբադուր» օպերայի մի պատկերը իմ մասնակցութեամբ։ Հարկ եմ համարում յայտնել, որ ես նկատի առնելով արտիստական ընկերութեան կօնցերտային ամբիօնի նեղ և անյարմար լինելը՝ օպերայի ներկայացման համար, դեռ 10 օր առաջ հրաժարվել էի այդ երեկոյթին մասնակցելուց։

Իւ. Սպենդիարեան

Թիֆլիս, 21 դեկտեմբերի

Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը հետևեալ բարեսէր անձերին, որոնք վճարել են մեր խնամքին յանձնված դպրոցի մի քանի չքաւոր աշակերտների ուսման վարձը, տ. տ. Մ. Բահաթրեանին, Ա. Թումանեանին, Ս. Բօզարջեանին, օր. Օ. Դօլուխանեանին, օր. Ե. Քափանակեանին, պ. պ. իշխան Վ. Արղութեանին, Ս. Խ.-ին, Ա. Ջօհրաբեանին և Խ. Տ.-ին։ Նաև յարգելի բժիշկ Մովսէս Մովսէսեանին, որ երկու տարի շարունակ ձրի բժշկում է դպրոցիս աշակերտներին։

Հոգաբարձութիւն Կուկիայ ս. Աստուածածին Նորաշէն դպրոցի

Թիֆլիս, 22 դեկտեմբերի

Իբրև բացատրութիւն «Մշակի» № 188-ի ներքին լուրերի բաժնում լոյս տեսած այն լուրի, որով հաղորդվում է «Նախչիրա» ընկ. ծառայող Սեդրակ Կիրակոսեանի ձեռքով ծախված՝ գիւղատնտեսական վարկի ընկերութեան կողոպտելու ժամանակ գողացված՝ Թիֆլիսի ազնուականների հողային բանկի տոկոսաբեր տոմսը № 04388/7։ Յիշեալ տոմսը «Նախչիրա» ընկերութեան վարչութիւն էր բերել անցեալ նոյեմբերի վերջերին ընկերութեան յանձնարարութեամբ իբրև հիւսն աշխատող Խաչատուր Խաչատուրովը և խնդրել էր ծախել այդ տոմսը։ Վարչութիւնը, վաղուց ճանաչելով Խ. Խաչատուրովին, չը կարողացաւ կասկածել, որ նրա ներկայացրած տոմսը գողացված է եղել, և, յարգելով Խ. Խաչատուրովի խնդիրը, յանձնարարեց իր ծառայող Սեդրակ Կիրակոսեանին ծախել այդ տոմսը։ Սեդրակ Կիրակոսեանցն էլ, կատարելով իր վրա դրված յանձնարարութիւնը, ծախեց յիշեալ տոմսը Ազով-Դոնեան առևտրական բանկի Թիֆլիսի բաժանմունքին։ Խնդրում ենք այն լրագիրներից, որոնք տպել են վերոյիշեալ լուրը, արտատպել ներկայ բացատրութիւնը։

«Նախչիրա» ընկ. վարչութիւն

ՄԱՄՈՒԼ

Վերջերս մենք հաղորդել էինք, որ Դաշնակցութեան IV ընդհանուր ժողովի կայացած որոշումների դէմ Թիւրքահայերը բողոքում են և առհասարակ օրինական չեն ճանաչում այդ վերջին ընդհանուր ժողովը։

Թիւրքահայերն իրանց մերժումը պատճառաբանում են այն հիմնաւոր հանգամանքով, որ ընդհանուր ժողովին Թիւրքահայաստանից ոչ մի պատգամաւոր չէ մասնակցել։ Անդրանիկը միմիայն մէկ նիստին է ներկայ գտնվել, իսկ Զարդարեանը, որ աւելի ծանօթ է Զմիւռնիայի գործերին (որը, յամենայն դէպս, Հայաստանի մասը չէ կազմում), չէր կարող Թիւրքահայաստանի իսկական վիճակին մօտիկից ու հանգամանօրէն տեղեակ լինել և լրջօրէն իմանալ նրա պահանջները, մանաւանդ որ նա՛ վաղուց է, ինչ հեռացել է Թիւրքիայից։

Դաշնակցութեան մէջ ընկած այս պառակտման առիթով Վառնայում (Բուլղարիա) հրատարակվող «Իրաւունք» թերթը, Հնչակեան կուսակցութեան մասին խօսելով, ի միջի այլոց գրում է.

Պառակտումի խօսքեր կընէ դաշնակցական թերթ մը։ Սխալ է, պառակտում չէ այս անգամ Վեր. Հնչակեանութեան մէջ պատահածը, այլ ճշմարիտ յեղափոխութիւն մըն է բռնակալութիւն փորձող քանի մը ոճրաբոյծ շէֆերը տապալելու, այսինքն կազմակերպութենէն դուրս առնելու։ Եւ այս յաջողուած է, որչափ որ ալ ոճրաբոյծները թուղթէ պատնէշներու ետևէն դեռ ինքզինքին պարտկել փորձեն. այո, ներքին յեղափոխութիւնը տարած է յաղթանակը, այսօր այլևս շարքերը խառնուած են, վստահելի անձնաւորութիւններ ու մարմիններ իրենց պաշտօնները գրաւած են։ Բարեբաղդելի է, որ Դաշնակցականութիւնն ալ այս կորովը, այս գիտակցութիւնը, այս ներքին կուռ յեղափոխութիւնը և սա ծափահարելի յաջողութիւնը ունենար, ու ազատէր զինք կաշկանդող, սխալ ճամբայ տանող—Թրքահայ դատին տեսակէտով—շէֆերէ ու շէֆիկներէ։

Ընդունինք որ Վեր. Հնչակ. կուսակցութիւնը իր տասնամեայ կեանքին մէջ մեծ գործ մը չըրաւ. նոյնը կարելի է ընդունիլ Հին Հնչակեաններու համար. բայց աղէկ Դաշնակցութիւնը ի՞նչ գործ տեսաւ, ի՞նչ արդիւնք ցոյց տուաւ Տաճկաստանի մէջ, առաջնորդուելով լոկ իր կովկասահայ շէֆերէն։ Եթէ գործ կարելի է անուանել Դաշնակցութեան կողմէ Հնչակեան կուսակցութեան նախկին սխալներու կրկնումը, և այդ անոր «Պահանջէ»-ի կողմը նշանակել, այդ «գործէն» ծագած աղէտներն ալ հարկ է «Պարտք»-ին կողմը նշանակել, և 12 տարուան հաշուեկշիռը կունենանք մեր աչքին առջև, ուստի 10—12 տարի առաջուան տաճկահայոց վիճակը ընթերցողը թող բաղդատէ այսօրուան վիճակին հետ։ Ահա հոս կը տեսնուի Դաշնակցութեան երկտասնամեայ գործունէութեան տխուր հետևանքը, երբ Հնչակեանները անգործ էին։

Անուրանալի անխղճութիւն է և միամիտներու աչքին թող փչել ըսելը՝ թէ Վեր. Հնչակ. Կուսակցութիւնը կազմուած է կովկասահայոց մասնակցութիւնը մերժելու սկզբունքով։ Ընդհակառակը, այդ կուսակցութիւնը գրկաբաց ընդունած է ու պիտի ընդունի իր մէջ անխտրաբար թէ կովկասահայը, թէ պարսկահայը, թէ հնդկահայը և թէ բուլգարահայը և պատրաստ գտնուած է ու պիտի գտնուի ամենուն իր յարմարութեան, իր ընդունակութեան ու իր ծանօթութեանց համեմատ տեղ ու դիրք տալ։

Աւելի շիտակ պիտի ըլլար, եթէ խըռովարական ոգին փնտռուէր դրօշակեաններու կովկասցի վարիչներուն մէջ, որոնք թէև տաճկահայ դատին համար մարմին առած կազմակերպութեան մը պետեր են, բայց միշտ դէպի տաճկահայութիւնը արհամարհանք ունենալէ չեն դադրիր բնաւ. օրինակ՝ «Դրօշակ» թերթը, որ գլխաւորապէս տաճկահայը կարդալ-հասկնալու համար է, սակայն տաճկահայուն գրեթէ անհասկանալի կովկասահայ լեզուաւ կը խմբագրուի միշտ, որովհետև կովկասահայ դրօշակեան վարիչները կարհամարհեն թէ տաճկահայը, թէ անոր լեզուն, թէ անոր գրականութիւնը, թէ անոր զգացումը ու սիրտը, թէև անցեալ տարի հայ-թաթարական կռիւներուն առթիւ Կովկասի մէջ ալ կռուողը և արիւնը թափողը տաճկահայ գաղթականն էր գլխաւորապէս։

Այո, տաճկահայ դատին համար և միայն անոր անունով կազմուող այդ Դրօշակեան կուսակցութեան կովկասահայ վարիչները, շէֆերը այն աստիճան կարևորութիւն չեն տուած տաճկահայուն և անոր մաքին ու դատողութեանը, և իրենց այս խտրական ու արհամարհական ոգիով այնչափ առաջ գացած են, որ սա Դ. պատգամաւորական ընդհ. ժողովին մէջ առանց նկատի առնելու, որ Տաճկահայաստանէն պատգամաւորներ չկան, միայն իրենք կովկասցիները անվարան կերպով վճռեցին տաճկահայաստանցիներուն ճակատագիրը, ընկերվարութիւնը ամեն դաշնակցականի պարտաւորիչ ընելով, և հարիւր հազարաւոր տաճկահայ կոտորուելուն պատճառ դարձող «ցուցական գործունէութիւնը» կրկին շարունակել որոշելով։

Բացի դրանից՝ աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերել մէկն այն բողոքթուղթերից, որոնք վերջին ժամանակներս յաճախ են լոյս տեսնում արտասահմանի դաշնակցականների շրջանում և որոնցով բուռն կերպով բողոք է յայտնվում դաշնակցութեան պատգամաւորական IV ընդհ. ժողովի ընդունած որոշումների դէմ։

Ընկերներ,

Նկատելով որ Հ. Յ. Դ. վերջին ընդհ. պատգ. ժողովը, իր ընդունած նոր դաւանանքով (սօցիալիստութիւն) կը դադրի այլևս զուտ տաճկահայ դատին նուիրուած յեղափոխական կազմակերպութիւն մը ըլլալէ,

Նկատելով որ ընդհ. ժողովի այդ որոշումը կը հակասէ նոյնիսկ Դաշնակցութեան սկզբունքին,

Նկատելով փորձերով կրկնուած և ընդունուած ցուցական գործունէութեան վնասակարութիւնը,

Նկատելով որ Դաշնակցութիւնը հակառակ իր կոչումին կը դժուարացնէ համերաշխութեան հարցը, հայ յեղ. կուսակցութիւններու միջև,

Նկատելով Հ. Յ. Դաշնակցութեան այլևայլ շրջանակներու մէջ տեղի ունեցած դրամական և այլ կարգի զեղծումները,

Նկատելով որ հեռացած դաշնակցական ընկերներու լռութիւնը կը քաջալերէ Դաշնակցութեան մէջ տեղի ունեցած զեղծումները և անոր դէպի կորուստ առաջնորդող տակտիքան,

Վերջապէս, նկատելով որ անհատական բողոքները անլսելի կը մնան, մենք՝ Բոսթընի և շրջակայքի բողոքող ընկերներս՝ կուզանք յայտարարել միւս շրջաններու մէջ գտնուող բողոքող բոլոր դաշնակցական ընկերներուդ, որպէսզի դուք ալ ձեր վայրերուն մէջ համախմբուելով կազմակերպուիք միացնելու ձեր ձայնը մերիններուն, հաւաքաբար բողոքելու վերջին ընդհ. պատ. ժողովի այն որոշումներուն դէմ, որոնք կուսակցութիւնը սխալ ու կործանաբեր ուղղութեամբ մը առաջնորդելով տաճկահայ դատը անել կացութեան մը կենթարկեն։

Այս առթիւ հարկ եղած յարաբերութեան համար ընկերները թող հաճին իրենց հասցէներն ու անունները ղրկել հետևեալ հասցէին.

A. R. F. P. Committee, P. O. Box 34
Station A, Boston, Mass.

Ի դիմաց Հ. Յ. Դ. Բոսթընի և շրջակայքի բողոքող ընկերներու գործադիր մարմնի

(Հինգ ստորագրութիւններ)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, 20 նոյեմբ.

Այստեղի պարսիկ ֆիդայիները (800-ի չափ) այսօր առաւօտանց, իրանց Մաշադի Բաղը գլխաւորն առաջնորդ ունենալով, թմբկահարութեամբ ամբողջ բազարը կողպել տուին։ Լինելով զինված և ամբոխային մեծ բազմութիւն հետները (ըստ մեծի մասին համալներ)՝ գրոհ տուին Թօփխանայի կողմը, դատաւորին քաղաքից հեռացնելու, որովհետև վերջինս ֆիդայիների խմբապետներից մէկին, որպէս խռովարարի, մի օր առաջ քաղաքից հեռացրել էր։

Դատաւորի տրամադրութեան տակ գտնված պատրաստի զէնքն ու զօրքը մի րօպէում կարող էր խելքի բերել շատերին դուր չեկող ֆիդայիներին և գետնից փռել ոչխարամիտ ամբոխին։ Բացի դրանից՝ չը նայած որ Թէհրանի և Թաւրիզի իշխանութիւններից և անջումաններից էլ կանխաւ իրաւունք էր տրվել պատժելու ըմբոստացողներին, սակայն դատաւորը վերահաս աբռնանեղութիւնների դէմ ձեռքերը լուաց և իսկոյն հեռացաւ։

Ցանցանքը, որ գործված էր, քաւելու համար պարսիկ մեծամեծները երեք անգամ գնացին-խնդրեցին դատաւորին, որպէսզի սա ճանապարհից վերադառնայ։ Ներելի չէր յանցանքը, նամանաւանդ պրինց Իմամ-Ղուլի միրզայի նկատմամբ։ Ուստի և չը վերադարձաւ։

Անցքը վատ ազդեց քաղաքի վրա։ Ազգաբնակութիւնը գրգռւեց ֆիդայիների և տեղական անջումանի նախագահ Միր-Աշրաֆ աղայի դէմ, որովհետև վերջինը նեցուկ եղաւ միջադէպի ղեկավարներին, փոխանակ զսպելու նրանց վայրենի բնազդը։ Հետևանքը կը յայտնենք։

Եթէ չասեմ անգէտ, գոնէ մոլեռանդ է Միր-Աշրաֆ աղան, որովհետև միահեծան Պարսկաստանում սահմանադրական կարգեր մտցնելու համար, ամենից առաջ, ամենաանհրաժեշտօրէն ազգերի փոխադարձ յարաբերութիւնները պէտք էր բարւոքել, համերաշխութիւն մտցնել և ոչ թէ մահմեդականի և քրիստոնեայի միջև նոր խոր անդունդ բաց անել։

«Հաւասարութիւն», «եղբայրութիւն», «մի հող ու ջրի և մի հայրենիքի զաւակներ», «գին այրի կարդաշ» խօսքերը կրկնող կրօնաւորն այսօր ասում է. «Քրիստոնեաների գնած և գնելիք կալուածների $^{1}/_{5}$-ական արժէքը սէյիդ մալի պիտի տալ, և եթէ մինչև այժմ չէ առնվել, այժմ պիտի առնել։ Այժմ սահմանադրական կարգերով ենք կառավարվում»։

Հիանալի չե՞ն արդեօք նման սահմանադրական կարգերը նման կարգադրիչներով։

Մի երկրորդը և աւելի հիանալին։

«Զադիգ իսլամը (մահմեդականութիւն ընդունող քրիստոնեան) կամ նրա որևիցէ ժառանգը քրիստոնեայ ազգականներից մինչև եօթներորդ պորտը կարող է ստացուածք պահանջել, որքան որ կուզենայ»։

Այս վերջինը թէպէտ և գործադրվում է Պարսկաստանում, բայց հանգուցեալ Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսին Նասր-Էդդին շահի շնորհած ֆէրմանով թուլացել և վերջանալու վրա էր, որը վերահաստատել է ուզում Միր-Աշրաֆ աղան։

Քրիստոնեայ բնակչութիւնը սարսափով է նայում սահմանադրական ժողովի ազդեցիկ հոգևորականի պատգամների վրա։ Բայց պէտք չէ սարսափել. վերոյիշեալ պատգամները չեն գործադրվի, գոնէ իմ կարծիքով։

Երէց-որդի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲՕԼԳԱՐԻԱ

Սարաֆովի եւ Գարվանովի սպանութեան մասին.—Սօֆիայից հաղորդում են «Р. Сл.» լրագրին, որ Սարաֆովի և Գարվանովի սպանութեան պատճառով բազմաթիւ կալանաւորութիւններ են տեղի ունենում։ Սակայն նրանց դէմ որևէ լուրջ մեղադրանքներ չը կան. նրանք բոլորն էլ կամ պատահական մարդիկ են կամ Պանիցայի ու Սանդանսկու համախոհներ։ Կալանաւորված է, ի միջի այլոց, ազգային ժողովի պատգամաւոր Ստոյշիմիրովը, որի յանցանքը կայանում է նրանում, որ նա մամուլի միջոցով և Սարաֆովի հետ ունեցած մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ դատապարտում էր յեղափոխական նացիոնալիզմը և, ի հարկէ, համամիտ էր Սանդանսկու հետ մակեդոնական շարժման մասին։

Այդ սպանութիւնը եթէ դատաստանական տեսակէտից դեռ ևս պարզված չէ, նրա պատճառներն ու բնաւորութիւնը սակայն վերջնականապէս պարզված են արդէն հասարակական քաղաքական տեսակէտից։

«Այժմ արդէն կասկածից դուրս է,—ասում է Թերթի Թղթակիցը,—որ սպանութիւնը կատարված է քաղաքական հողի վրա, որ նա թելադրված է եղել ոչ թէ անձնական ատելութեամբ կամ անձնական մրցութեամբ, այլ զուտ գաղափարական դրդումներով, որոնք ծագել են այն խորին համոզմունքից, որ Մակեդոնիայի ազատութեան գործի համար կորստաբեր է այն նացիոնալիստական գործելակերպը, որի ներկայացուցիչն էր Բօլգարիայում Սարաֆովը։ Բայց դրանից հիմք կայ կարծելու, որ այդ համոզմունքը, ինքնըստինքեան, դեռ ևս բաւարար չէր լինի Սանդանսկուն և Պանիցային մի այնպիսի սարսափելի գործի դրդելու համար, ինչպիսին է հակառակ հոսանքի պարագլուխների սպանութիւնը։ Հիմնաւոր է թէ ոչ, բայց Սանդանսկին, ըստ երևոյթին, կարծում էր, որ Սարաֆովը եռանդուն պատրաստութիւններ է տեսնում առաջիկայ գարնանը Մակեդոնիայում նոր ապստամբութիւն սկսելու համար։ «Ներքին կազմակերպութեան» տեսակէտից մի այդպիսի ապստամբութիւն, ներկայ պայմաններում, մակեդոնական շարժման համար կը լինէր աւելի կորստաբեր, քան 1902—1903 թւականների ապստամբութիւնը։ Հարկաւոր էր, ինչ գնով էլ լինէր, խանգարել այդ գործը։ Եւ Պանիցան յանձն առաւ խանգարել նրան գնդակով։

«Այդ բոլորը, ի հարկէ, չէ արդարացնում ո՛չ ոճրագործին, ո՛չ էլ նրանց, որոնք թագնված են նրա թիկունքի ետևը։ Արդարանալու նրանք տեղ չունեն ո՛չ բօլգարական մամուլում և ո՛չ բօլգարական հասարակութեան մէջ,—ես չեմ գտնում ներկայ դէպքում նոյնիսկ աւտօնօմիստ-ինտերնացիոնալիստների բանակին պատկանող մակեդոնական յեղափոխականներին,—մինչև այժմ էլ չէ բարձրացել մի ձայն այդ գարշելի գործը պաշտպանելու համար։

Պանիցան սպանված.—Սարաֆովին սպանող Պանիցան, ռումինական լրագիրների ասելով, գտնված է մեռած երկաթուղու գծի վրա՝ Բուքարեշտ և Գուրչևօ կայարանների միջև։ Պանիցայի մարմինը անդամահատել է գնացքը։

Նիկօլովի նամակը.—Ցօնչևի ֆրակցիային պատկանող մակեդոնական պարագլուխ գնդապետ Նիկօլովը դիմել է մի նամակով բօլգարական արտաքին գործերի մինիստր Ստանչևին, որտեղ փաստերի հիման վրա ապացուցանում է, որ բօլգարական կառավարութիւնը մի ձեռքով պաշտպանում է մակեդոնական յեղափոխական հրոսակախմբերի կազմակերպութիւնը, իսկ միւս ձեռքով պառակտում է սերմանում մակեդոնական պարագլուխների միջև։ Ցօնչևը սպառնում է հրապարակ հանել, հրատարակել այդ առիթով եղած բոլոր փաստաթղթերը, եթէ միայն բօլգարական կառավարութիւնը վերջ չի տայ իր երկդիմի միջամտութեանը մակեդոնական գործերում։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհրդի ֆինանսական մասնաժողովի դեկտեմբերի 18-ի ընդհանուր ժողովում քննվեց 1907 թ. անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեանը պետական գանձարանից 15,183,000 րուբլի նպաստ տալու օրինագիծը, որը, ինչպէս յայտնի է, ընդունվեց Պետական Դումայից։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ օրինագիծը ընդունվեց մի քանի փոփոխութիւններով։

Բարձրագոյն թոյլտւութեամբ առևտրի մինիստրի խորհրդի անդամ բարօն Նոլդէն ժամանակաւորապէս կը վարէ առևտրի մինիստրի պաշտօնը, իսկ առևտրի մինիստրի խորհրդի անդամ Բեզօբրազովը կը կատարէ առևտրի մինիստրի օգնականի պարտականութիւններից մի քանիսը։

ՊԱՐԻԶ։ Ամբողջ գիշերս ձիւն էր գալիս։ Ուրիշ տեղերից էլ հաղորդում են, որ ձիւն է գալիս։

ԼՕՆԴՕՆ։ «Մօրնինգ-Պօստին» Վաշինգտօնից հաղորդում են, որ Ֆիլիպպեան կղզիները տարել են մեծ քանակութեամբ ռազմամթերքներ Մանիլեան նաւահանգիստը պաշտպանելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն ուկազով սենատին հրամայված է երկարեցնել մինչև 1908 թ. յունիսի 21-ը Բաթումի շրջանի Կինտրիշի գաւառամասի և Բաթում քաղաքի ուժեղացրած պահպանողական դրութիւնը։

ՌԵԱԶԱՆ։ Պետական Խորհրդի անդամ ընտրվեց զէմստվօյի կողմից ազնուականութեան նահանգական պարագլուխ հօֆմէյստէր Վլադիմիր Ալէք. Դրուշուսօվը, Մոսկվայի համալսարանի իրաւունքների կանդիդատ։

ԽԵՐՍՕՆ։ Պետական խորհրդի անդամ ընտրվեց զէմստվօյի կողմից Պեօտր Րէվացկին, ազնուականութեան Ելիսավէտգրադի նախկին պարագլուխը։

ՍԱՄԱՐԱ։ Դեկտեմբերի 19-ին բազմամարդ փողոցում սպանվեց նահանգական ժանդարմական վարչութեան կառավարիչ գնդապետ Բօբրովը։

ԲԵՐԼԻՆ։ Վախճանվեց յայտնի վիրաբոյժ պրոֆեսոր Գոֆֆան։

Բինն-խոմասէն ցեղի դէմ պատերազմական գործողութիւնները աւարտված համարելով, ֆրանսիական զօրքերը յետ են կանչվում հայրենիք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^{1}/_{2}$—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Իշխանութեան թոյլտւութեամբ Թիֆլիսում հիմնված է

Ատաղձագործների ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԲԻՒՐՕ,

որը վերցնում է ատաղձագործական աշխատանքներ չափաւոր գներով, համեմատ աշխատավարձի, կտորով և օրով. միևնոյն ժամանակ վերջինի գները բաժանված են 4 կատեգօրիայի։ Բիւրօն երաշխաւոր է իր անդամների համար միայն այն դէպքում, եթէ պատուէրը տրված է իրան—բիւրօյին։ III քաղաքամաս, Ռուսսկայա և Վանքսկայա փող. անկիւն, տուն Ներսիսեան դպրոցի, վերին յարկ, ամեն օր ցեր. 7—3 ժամը։

(Կ.) 8—8

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԱՐՈՅԱՊԷՍ ԸՆԿԱԾ
և
ԱՄԵՆՔԻՑ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾԻՆ
276 մեծադիր եջ, գինը 50 կոպ.

Դիմել Թիֆլիսի և թէ այլ տեղերի գրավաճառներին, որոնց մօտ կարելի է ստանալ նաև հեղինակի աշխատութիւնները, և կամ ուղղակի հեղինակին՝ Тифлисъ, Орбеліановская, № 24, Левону Вардани Меликъ Адамянцу.

Կ. 1—5

Առաջարկվում է որպէս
ՆՈՐ-ՏԱՐՎԱՅ ՆՈՒԷՐ
նկարիչ
ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
Անիի ալբոմը
Գինն է 1 ր. 20 կ.

Դիմել՝ «Գուտտէնբերգ» գրավաճառանոցը։
(Կ. հ. շ.) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ ներկայ տարվայ դեկտեմբերի 28-ին նշանակված է ընդհանուր ժողովի շարունակութիւնը՝ քուէարկելու ժողովարանի կանդիդատ առաջարկված անձերին և քննելու ժողովարանի նախկին քարտուղար Խօջաէյնաթեանի անկանօն գործողութիւններին վերաբերեալ հարցերը։

Կ. Ե. 1—2

ՄԵՂՐ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆԻ մեղուանոցից
ծախվում է պուդերով

Պուդը 9 րուբլի։ Գալ առ. ժ. 11—2. Հասցէն Բեթղեհէմի վերևը, տ. Սիմէօնեանցի № 3, Կուսանաց վանքի մօտ. վերին յարկ։ 4—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
„ԱՂԲԻՒՐ-ԴԱՍՏԻԱՐԱԿ“
1907 Բովանդակութիւն №№ 10—11

Մկրտիչ Ա. Վեհափ. կաթողիկոս...—Պատկեր
Մահգոյժ Նորին Օծութեան ամենայն հայոց կաթողիկոսի՝ Մկրտիչ Ա. Ազգապետ Թորգոմեան տոհմի...—Պատկեր
Մահգոյժ Պերճ Պռօշեանցի.
Պերճ Պռօշեանց—Պատկեր
Հայկական գեղագրեր XIII դար. Ս. Էջմիածնայ ազգային Մատենադարանում։
Պերճ Պռօշեանցի յիշատակին—Գեորգ Բարխուդարեան
Պերճ Պռօշեանց—Իսահակ Յարութիւնեան
Ուխտաւորները Սանահնում—Պատկեր
Սանահին վանուց ճնճղուկ (անտիպ նորագոյն բանաստեղծութիւն) գրեց ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ
Հայոց Հայրիկը Մեսրոպի այգում—Պատկեր
Արծուիկ (զրոյց) Գր. Զուբար
Հայոց Հայրիկը դագաղում—Պատկեր
Հայրիկի յիշատակին (բանաստեղծ.) Յար. Պետրոսեան
Ըղձանք խաչին (բանաստեղծ.) Արցունք
Միանձնուհի—Պատկեր
Հայրիկեան թանգարան ս. Էջմիածնում—Պատկեր
Հայոց Հայրիկի կեանքից, ժողովեց Ն. Վ. Տ. Աւետիսեան
Զօրականի որդին՝ Գիշերվան անցքը—Գ. Մոռոռեանց։

—

Բացված է 1908 թ. բաժանորդագրութիւն
XXVI տարի ԱՂԲԻՒՐԻ
և
ՏԱՐԱԶԻ XIX տարի
Մանրամասնութիւնները միւս շաբաթ
1—1

Բացված է բաժանորդագրութիւն
1908 թ. բարեփոխված
„ՀՈՎԻՒ“
ազգային, հասարակական եւ գրական շաբաթաթերթի
(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագ.	Տարեկան . . .	4 ր.
	Կէս տարվան .	2ր. 50կ.

Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՎԵԼ

Թիֆլիսում — խմբագրատանը՝ Большая Ванкская № 16. Կայսրութեան այլ քաղաքներից—դիմել՝ Тифлисъ, редакція „Овивъ“ Արտասահմանից—Rédaction «Hovive» Caucase (Russie)։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԵԶՆԻԿ ա. ք. ԵՐԶՆԿԵԱՆՑ

Կիրակի, դեկտեմբերի 23-ին 1907 թ.
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՅՕԳՈՒՏ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տեղի կունենայ
ԾԱՂԿԱԶԱՐԴ ԵՐԵԿՈՅԹ

Կը ներկայացնեն օպերաներից մի քանի տեսարաններ հայերէն լեզուով Ա. Մանուկեանի.
I. «ԱԻԴԱ» օպերայից՝ II գործողութեան ա. պատկեր, մասնակցութեամբ տ. Ստեփանեանի, օր. Մէլիք-Բաբախանեանի և սիրողների երգեցիկ խմբի.
II. «Տրուբադուր» օպերայից, IV գործ., մասնակցութեամբ Նորեկի, և Պալեևի ղեկավարութեամբ։

ՎԻՃԱԿԱԽԱՂ ԵՒ ՊԱՐԵՐ։

Խնդրում են բոլոր այցելուներին ծաղիկներ ունենալ. այս կարգադրութիւնը չը կատարողները ենթարկվում են 20 կոպէկ տուգանքի։
Դահլիճը շքեղ զարդարված կը լինի ծաղիկներով ու կանաչով. ծաղկեայ կիօսկներ և բուֆէտ։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ
ԳՈՅՆԶԳՈՅՆ ՃԱՃԱՆՉՆԵՐ

Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին։
Տոմսակների գինն է 2 ր. 20 կ., ուսանողների համար 50 կոպ.։
Տոմսակները նախօրօք կարելի է ստանալ Արտիստական ընկերութեան կասսայում։

Ռեժիսեօր՝ պ. ԲԷԼՍԿԻՅ
(2, 9, 12, 16, 20, 23) 6—6

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
Արտակարգ ընդհանուր ժողովի
որը կայանալու է ներկայ 1907 թւի դեկտեմբերի 30-ին, կիրակի օրը առաւօտեան ժամը 11-ին, ընկերութեան գրասենեակում, Սօլօլակսկայա փողոց, տուն Արաֆելովի, № 9.

Պարապմունքի առարկաները լինելու են հետևեալ հարցերը՝

1) «ԱՆՕՆԻՄ» նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ մասնակցելը.
2) Նոր նաւթարդիւնաբերական հողաբաժիններ առնել կամ կապալով վերցնելը։

(դ. 16, 23, 30) 2—3

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 70—100

ԲԺԻՇԿ
Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ

Ընդունելութիւն | 10—12 առաւօտ. / 6— 7 երեկ.

Բոլշշեվսկի փող. № 22.
(ամ.օ.) 10—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(Ե. հ. շ. կ.) 43—50

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան / 5—7 ժ. երեկոյեան

Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 70—100

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական անտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1908 թ. յունվարի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул , № 22, ամենայն օր։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։

(Կ. Ե. Հ.) 6—15

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
«ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

31 դեկտ. (13 յունվ. ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, „Bagdad“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Տոմսակների վաճառումը ճանապարհորդների համար ժամանակաւորապէս դադարեցրած է, Բաթումից գնացողների դէմ Տաճկաստանում քարանթին նշանակվելու համար։

Ապրանքների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—1 ժամը ցերեկվայ և 5—6-ը երեկոյեան ամեն օր, բացի կիրակի օրերից։

(Կ.) 1—1

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакопоръ съ С-ми
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.